Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ արմավիրի մարզի <<Փարաքարի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու և գրականություն (17 դ/ժ)»,ուսուցչի թափուր տեղի համար:

Փաստաթղթերը ընդունվում են 2022թ.սեպտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ն,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը կկայանա 2022թ. սեպտեմբերի 16-ին, ժամը՝ 14.00, Փարաքարի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել 093-43-38-28 հեռախոսահամարով

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

— դիմում (ձև 1),

— 1 լուսանկար 3×4 չափի,

— բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

— անձը հաստատող փաստաթուղթ,

— «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

— ինքնակենսագրություն (ձև 5),

— այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

— ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

— հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

— որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: